ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՇԱԿ ՔԵՐՈԲՅԱՆԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ, ԵՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԷԼԻԶ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԳԱՐՄԻՇ-ՊԱՐՏԵՆԿԻՐԽԵՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը**

   Արշակ Քերոբյան:

   Էլիզ Գևորգյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ:

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջազգային վարչության ԵՄ և միջազգային կազմակերպությունների բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Գարմիշ-Պարտենկիրխեն), 2023թ. սեպտեմբերի 25-ից 29-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Ջորջ Մարշալի անվան Անվտանգության ուսումնասիրությունների եվրոպական կենտրոն ԱՄՆ պետդեպարտամենտի աջակցությամբ:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն 2023 թվականի սեպտեմբերի 25-ից 29-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գարմիշ-Պարտենկիրխեն քաղաքում տեղի ունեցած կիբեռդիվանագիտության բարձր մակարդակի աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

   Արշակ Քերոբյանը և Էլիզ Գևորգյանը միջոցառման շրջանակներում կատարել են ազգային կիբեռպատահարներին արձագանքման գործում կիբեռդիվանագիտության դերի, ոլորտային համագործակցության խթանման մոտեցումների, ծրագրերի ու հնարավորությունների ուսումնասիրություն, քննարկումներ են ունեցել միջոցառման մասնակից տարբեր պետությունների ներկայացուցիչների հետ, բանակցություններ վարել գործընկերային կապեր հաստատելու ուղղությամբ:

   Ս.թ. սեպտեմբերի 25-ին մեկնարկել է աշխատաժողովի սկիզբը, որի շրջանակներում որպես խոսնակներ Ջորջ Մարշալի անվան Անվտանգության ուսումնասիրությունների եվրոպական կենտրոնի կիբեռանվտանգության հետազոտությունների ծրագրի տնօրենի պաշտոնակատար Ջոնաթոն Ջի Օդոմն ու ԱՄՆ պետդեպարտամենտի կիբեռտարածության և թվային ռազմավարության բյուրոյի անդամ պարոն Ջեյռ Ստելտը ողջունել են մասնակիցներին,

ներկայացրել ընդհանուր տեղեկատվություն աշխատաժողովի վերաբերյալ, իրազեկել կիբեռանվտանգության կարևորագույն խնդիրներին և գործիքներին:

ԱՄՆ-ի և Գերմանիայի կողմից հովանավորող Ջորջ Մարշալի անվան անվտանգության հետազոտությունների կենտրոնը եզակի հնարավորություն է ստեղծում քննել գլոբալ և տարածաշրջանային ժամանակակից միտումները, անվտանգության հարցերը, ազգային անվտանգության ռազմավարությունները, պաշտպանական պլանավորումը և այլ հարակից ոլորտներ:

Միջոցառման շրջանակներում Ջորջ Մարշալի անվան անվտանգության հետազոտությունների կենտրոնի կիբեռանվտանգության ուսումնասիրությունների պրոֆեսոր դոկտոր Շոն Քոստիգանն անդրադարձել է կիբեռտարածությունում աշխարհաքաղաքական փոփոխություններին, այնուհետև կազմակերպվել են խմբային քննարկումներ, որից հետո Ջոնաթոն Ջի Օդոմը խոսել է ազգային կիբեռանվտանգության ռազմավարության մասին, անդրադարձ է կատարվել կիբեռքաղաքականության, ազգային անվտանգության և դիվանագիտության միջև կապին, կիբեռխնդիրներին, նկարագրվել են ազգային կիբեռանվտանգության բարձրացման ուղղությամբ առկա խնդիրները: Որպես խոսնակ հանդես է եկել նաև ԱՄՆ պետդեպարտամենտի կիբեռտարածության և թվային ռազմավարության միջազգային կիռերտարածության անվտանգության բյուրոյի անդամ Լիզլ Ֆրանցը:

«Կիբեռտարածքում ՄԱԿ-ի պատասխանատու պետության վարքագծի շրջանակ. միջազգային իրավունք» խորագրով լիագումար նիստի շրջանակներում Ջոնաթոն Ջի Օդոմը, ԱՄՆ արդարադատության վարչության ազգային անվտանգության բաժնի ներկայացուցիչ տիկին Քիմբերլի Ռալին և Էստոնիայի արտաքին գործերի նախարարության, թվային և կիբեռդիվանագիտության հարցերով պատասխանատու տիկին Աննա-Մարիա Օսուլան ներկայացրել են կիբեռխնդիրների վերաբերյալ ազգային որոշումների կայացման արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության չափորոշիչները: Քննարկվել են կիբեռդիվանագիտության առանցքային ուղղությունները՝ պետությունների պատասխանատու վարքագծի ձևավորման, ինչպես նաև պետությունների միջև վստահության ամրապնդման նպատակով:

«Ազգային կիբեռանվտանգության օրենք» թեմայով քննարկումների ընթացքում որպես խոսնակներ հանդես են եկել Ջոնաթոն Ջի Օդոմն ու Ռումինիայի արտաքին գործերի նախարարության կիբեռանվտանգության հարցերով խորհրդական պարոն Քրիսթիան Դրիգան:

«Կիբեռմիջադեպերի արձագանքման» թեմայով քննարկումների ընթացքում ելույթով հանդես է եկել Շոն Քոստիգանը:

Կիբեռանվտանգության միջազգային համագործակցություն և կարողությունների զարգացում թեմայով քննարկմանը պարոն Ջեյռ Ստելտը և Շվեդիայի արտաքին գործերի նախարարության դեսպան, կիբեռդեսպան Անդրես Ժատոն անդրադարձել են քաղաքականությանն ու տեխնոլոգիաներին առնչվող հարցերին, քննարկել կիբեռսպառնալիքների հետ կապված խնդիրները՝ սահմանելով առկա դիվանագիտական գործիքների շրջանակը:

«Կիբեռմիջադեպեր և ճգնաժամային հաղորդակցություններ» թեմայով քննարկմանը Ջոնաթոն Ջի Օդոմն ու Ռոբերտ Շումանի առաջադեմ հետազոտությունների կենտրոնից Պատրիկ Պավլակը հանդես են եկել ելույթներով:

Աշխատաժողովի ամբողջ ընթացքում կազմակերպվել են խմբային քննարկումներ և վարժանքներ, իսկ վերջում՝ ս.թ. սեպտեմբերի 29-ին, Ջոնաթոն Ջի Օդոմն ու Ջեյռ Ստելտն ամփոփել են աշխատաժողովի արդյունքները և հանդես եկել եզրափակիչ ելույթներով՝ մեկ անգամ ևս ընդգծելով կիբեռքաղաքականության և կիբեռդիվանագիտության դերի կարևորությունը միջազգային գործընթացների զարգացման համար՝ նշելով, որ այդ խնդիրների լուծումը պահանջում է համակարգված քաղաքականության մշակում և իրականացում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ Արշակ Քերոբյանը և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջազգային վարչության ԵՄ և միջազգային կազմակերպությունների բաժնի պետ Էլիզ Գևորգյանը ներկայացրել են Հայաստանի Հանրապետությունում կիբեռանվտանգության զարգացմանն ուղղված մոտեցումներն ու իրականացվող ծրագրերը, թիրախային միջոցառումները, Հայաստանում թվային փոխակերպմանն ուղղված ռազմավարության զարգացման նպատակով Նախարարության կողմից իրականացվող քաղաքականությունը՝ նշելով, որ այն իրականացվում է Հայաստանի թվայնացման 2021-2025թթ. ռազմավարության հիման վրա: Այնուհետև Արշակ Քերոբյանը խոսել է Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության, համայնքային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմերի (Community Emergency Response Team (CERT)), Հայաստանում կիբեռանվտանգության գերազանցության ազգային կենտրոն հիմնելու ծրագրերի վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել՝ շարունակել քննարկումները առկա պայմանավորվածությունների իրականացման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արշակ Քերոբյան

Էլիզ Գևորգյան

04.10.2023թ.